



ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N *****

Visa միջազգային վճարային համակարգի քարտերի տրամադրման և սպասարկման

ք. *****

*****թ.

«Յունիբանկ» ԲԲԸ-ն (իրավաբանական հասցեն՝ ՀՀ ք. Երևան Չարենց 122., թիվ 53, թիվ 1-5) այսուհետ՝ «Բանկ», ի դեմս Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ում անունից լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Բանկի Օպերացիոն սպասարկման դեպարտամենտի տնօրեն Անժելա Սերայդարյանը, մի կողմից, և քաղաքացի ***** այսուհետ՝ «Քարտապան» (***** * *****, տրված *****-ի կողմից ***) , մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պայմանագրում օգտագործվող հասկացություններ՝

Visa քարտ - Բանկի սեփականություն հանդիսացող քարտ է, որը ժամանակավորապես տրամադրվում է Քարտապանին իր քարտային հաշվից Visa Միջազգային վճարային համակարգի ցանցում վճարումներ կատարելու և կանխիկ միջոցներ ստանալու նպատակով:

Քարտապան – Բանկի հետ կնքված պայմանագրի հիման վրա Քարտն օգտագործելու իրավունք ունեցող ֆիզիկական անձ:

Վճարային սահմանաչափ - միջոցներ, որոնք սահմաններում Քարտապանը կարող է կատարել վճարումներ:

Քարտային հաշիվ - Բանկում քարտապանի անունով բացված և քարտով սպասարկվող բանկային հաշիվ:

1.2 Բանկը թողարկում է՝

Visa Digital պլաստիկ քարտեր, որոնք գործում են Visa միջազգային վճարային համակարգում:

1.3 Քարտերը տրամադրվում և սպասարկվում են համաձայն ««Յունիբանկ» ԲԲԸ-ի VISA քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները և սակագները»-ի /տես <https://www.unibank.am/hy/service/rates> հղումով/:

2. Պայմանագրի առարկան

2.1 Սույն պայմանագիրը կարգավորում է Բանկի և Քարտապանի փոխհարաբերությունները՝ Բանկի քարտերը Քարտապանի կողմից որպես վճարային միջոց օգտագործելու ընթացքում:

3. Բանկի իրավունքները և պարտականությունները

3.1 Բանկն իրավունք ունի՝

3.1.1 Թույլատրել Քարտապանին քարտով անկանխիկ վճարումների իրականացումը (հավաստագրում), եթե պահանջվող գումարը, ներառյալ գանձվող կոմիսիոն վճարները, չի գերազանցում վճարային սահմանաչափը:

3.1.2 Վաղաժամկետ հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններից օրենսդրությամբ սահմանված կամ Քարտապանի կողմից սույն պայմանագրի դրույթների խախտման դեպքերում՝ այդ որոշման մասին Քարտապանին 10 օր առաջ տեղյակ պահելով հատուկ գրությամբ:

3.1.3 Փոփոխել քարտի տրամադրման և սպասարկման սակագները՝ 10 օր առաջ տեղյակ պահելով Քարտապանին:

3.1.4 Քարտապանի քարտային հաշվից գանձել քարտերի տրամադրման և սպասարկման վարձավճարներն ու միջնորդավճարները /տե՛ս <https://www.unibank.am/hy/service/rates> հղումով/:

3.2 Բանկը պարտավոր է՝

3.2.1 Քարտապանի դիմումի հիման վրա բացել քարտային հաշիվ ***** ***/:

3.2.2 Ապահովել քարտի պատշաճ սպասարկումը:

3.2.3 Վճարել տոկոսագումարներ Քարտապանի քարտային հաշվին մնացորդի նկատմամբ բանկի կողմից սահմանված «VISA քարտերի տրամադրման և սպասարկման սակագներ»-ի /տե՛ս <https://www.unibank.am/hy/service/rates> հղումով/:

3.2.4 Հաշվի մնացորդի ճշտության վերաբերյալ Քարտապանի կողմից բողոքարկման դեպքում Քարտապանի հետ կատարել փոխադարձ հաշվարկ և Բանկի մեղքով թույլ տրված անճշտության հայտնաբերման դեպքում 2 բանկային օրվա ընթացքում պատասխան տալ հաճախորդին անճշտության մասին և հնարավոր սեղմ ժամկետում շտկել այն:

4. Քարտապանի իրավունքները և պարտականությունները

4.1 Քարտապանն իրավունք ունի՝

4.1.1 Քարտով կատարել անկանխիկ վճարումներ VISA վճարային համակարգի առևտրային ու սպասարկման կետերում:

4.1.2 Հաշվի քաղվածքը ստանալուց հետո 120 օրացույցային օրվա ընթացքում գրավոր բողոքարկել քաղվածքում նշված գործարքները:

4.1.3 Վաղաժամկետ հրաժարվել սույն պայմանագրից, եթե գրանցվում է Բանկի կողմից պայմանագրի պայմանների խախտում:



4.1.4 Ստանալ իր հաշվի քաղվածքները և «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը՝

- V Էլեկտրոնային եղանակով *****
- o Փոստային կապի միջոցով
 - o Բանկի տարածքում՝ առձեռն

4.2 Քարտապանը պարտավորվում է՝

4.2.1 Վճարումներ կատարել՝ 1.3 կետով նախատեսված Բանկի կողմից VISA միջազգային պլաստիկ քարտերի տրամադրման և սպասարկման սակագներին համապատասխան:

4.2.2 Հետևել քարտի օգտագործման բոլոր պայմաններին:

4.2.3 Չգերազանցել քարտի վճարային սահմանաչափը:

5. Քարտի գործողության ժամկետը

5.1 Քարտը գործում է մինչև *****: Նրա գործողության ժամկետը նշված է քարտի դիմերեսին:

6. Այլ պայմաններ

6.1. Բանկը երաշխավորում է Քարտապանի, ինչպես նաև նրա կողմից կատարված գործառնությունների մասին տեղեկությունների գաղտնիությունը:

Այդ տեղեկությունները կարող են տրամադրվել երրորդ անձին միայն գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

6.2. Սույն պայմանագրի առնչությամբ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են հաճախորդի հայեցողությամբ՝ ստորև նշված տարբերակներից բացառապես մեկն ընտրելով «V» նշանի միջոցով.

V բոլոր վեճերի լուծումը հանձնվում է «Օպտիմուս Լեքս» Ընկերության մշտապես գործող Արբիտրաժային դատարանին, այսուհետ նաև՝ Արբիտրաժային դատարան, որում գործի քննությունը իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին և Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Սույնով Քարտապանը հավաստիացնում է, որ Բանկը ծանոթացրել է իրեն Արբիտրաժային դատարանում գործերի քննության ընթացակարգին, և գրավոր բացահայտել է Կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ բավարար տեղեկատվություն: Քարտապանը հաստատում է, որ ստացել է արբիտրաժային վարույթի ընթացքում հաճախորդի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական ամփոփագիրը: Արբիտրաժային դատարանի կանոնակարգը տեղակայված է Ընկերության պաշտոնական ինտերնետային www.optimuslex.am կայքում: Կողմերը սահմանում են, որ Արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Արբիտրաժային դատարանի կանոնակարգին համապատասխան: Վեճի քննությունը իրականացվում է գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման, բացառությամբ «Արբիտրաժային դատարանի կանոնակարգով» նախատեսված դեպքերի՝ ՀՀ նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն է հայերենը, Արբիտրաժի վայրն է ՀՀ, ք. Երևանը,

o կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

6.3. Սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի հասցեի, կարգավիճակի կամ պայմանագրին վերաբերվող այլ փոփոխությունների դեպքում անհապաղ տեղյակ է պահվում մյուս կողմին:

6.4. Սույն պայմանագրի որևէ դրույթ կարող է փոփոխվել միայն կողմերի գրավոր համաձայնությամբ:

6.5. Հաստատում եմ, որ սույն պայմանագրի 9-րդ կետով նախատեսված էլեկտրոնային հասցեն հանդիսանում է իմ անձնական օգտագործման էլեկտրոնային հասցեն և համաձայն եմ, որ սույն պայմանագրով բացված բանկային հաշվի վերաբերյալ բոլոր ծանուցումները ուղարկվեն ներքոնշյալ հասցեով:

6.6. Բանկը պատասխանատվություն չի կրում իր հսկողության սահմաններից դուրս առաջացած կոնֆլիկտային իրադարձությունների համար:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

7.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրն՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

* Քաղվածքի ստացման փաստի հաստատում է համարվում՝



- ա) Փոստով առաքման դեպքում անդորրագրի պատճեն հաճախորդի ստորագրությամբ,
բ) Բանկում քաղվածքի տրամադրման դեպքում՝ մատյանում հաճախորդի ստորագրությունը,
գ) Բանկի էլ. հասցեի համապատասխան բաժնում ուղարկված տեղեկատվության առկայությունը:

8. Պայմանագրի կողմերը

ԲԱՆԿ

Յունիբանկ ԲԲԸ
ՀՀ ք. Երևան Չարենց 122., թիվ 53, թիվ 1-5
Օպերացիոն սպասարկման դեպարտամենտի տնօրեն
Անժելա Սերայդարյան

Ստորագրություն
Կ.Տ

ՔԱՐՏԱՊԱՆ

անուն, ազգանուն

հասցե

*****\ *****

անձնագրային տվյալներ

Հեռախոս՝ *****

Էլ. Հասցե՝ *****

Ստորագրություն

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ,

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Հիմնադրամի գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան 010, Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն

Հեռախոս՝ (+374 10) 58 35 14

Ինտերնետային կայքը՝ <http://www.adgf.am/>

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետև՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	Երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք. ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություններ, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդներ ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժույթային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,

գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,



դ) Ձեր ավանդին օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսնօրյա ժամկետում Հիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը:

Գործընթացը սկսվում է զանգվածային լրատվական միջոցներում հատուցման վերաբերյալ Հիմնադրամի կողմից լրացուցիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ քան հատուցման դեպքի օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի:

Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

Երաշխավորված ավանդ (այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուների մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ)

☒

չերաշխավորված ավանդ

☐

Ավանդատու՝ *****

Անձնագրային տվյալները՝ *****

Ավանդատու

ստորագրություն

Բանկի գործադիր տնօրեն կամ բանկի կողմից լիազորված այլ անձ

ստորագրություն

Կ.Տ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին: